**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-4/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ (ՀՄԱ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **21.12.2017թ.**
ժամը 17:30

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ՍՎ ԱԾ ՀՊ բաժնի պետ, մայոր Գ. Օհանյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան:
Բացակայում է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության բաժնի ավագ սպա մայոր Հ. Բարսեղյանը:

**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Վ. Սահակյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-4/1» ծածկագրով հրատապ մեկ անձից գնումների կատարման (ՀՄԱ) ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Վ. Սահակյան)

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման հիման վրա ներկայացված համապատասխան եզրակացությունը քննարկելու և հաղթող (ընտրված) մասնակիցներին ճանաչելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

**1. Մասնակիցների՝ հրատապ մեկ անձից գնումների (ՀՄԱ) ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնահատման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Վ. Սահակյան)

1.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Արպանիկ» և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ներին հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս հետ կնքել պայմանագիր:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Վ. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-4/1» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող (ԳԱՊ) | Հ. Կարապետյան |
| Գնահատող | Գ. Օհանյան |
| Գնահատող | Ա. Սիմոնյան |
| Գնահատող | Ա. Մաղաքյան |
| Գնումները համակարգող՝ | Վ. Սահակյան |

21.12.2017թ.